ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.

№16

ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ----------2
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ----------4
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ----------5
ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ----------7
ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ----------8
ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ----------9
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ----------10
ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ----------12

ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

01.12թ.2020թ - 31.12.2020թ

Անվանում	Օր	Ժամ
«ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օր» Տրանսգենդեր և սեքս աշխատող անձանց ֆոտոպատմությունների ցուցադրություն	01.12.2020	16:00
«Ատիվիզմի հեռանկարները ՀՀ-ում» ZOOM օնլայն համայնքային հանդիպում	04.12.2020	16:00
Ֆիլմի դիտում և քննարկում մարդու իրավունքների օրվան ընդառաջ	08.12.2020	16:00
ԻԿՀԿ հանրային հայտարարության և հոլովակի հրապարակում մարդու իրավունքների օրվա վերաբերյալ	09.12.2020	16:00
«Կանխելով արմատացած բռնությունը» ZOOM օնլայն համայնքային հանդիպում	15.12.2020	13:00
ԻԿՀԿ հանրային հայրատարարության հրապարակում դեկտեմբերի 17-ի վերաբերյալ	16.12.2020	16:00
«Սեքս աշխատողների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օր» Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց ֆոտոպատմությունների ցուցադրություն	17.12.2020	15:00
«Ամփոփելով տարին Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց հետ» համայնքային հանդիպում	22.12.2020	16:00
Իրավաբանական խորհրդատվություն	24.12.2020	16:00

Ֆիլմի դիտում-քննարկում

Դեկտեմբերի ութին՝ Մարդու իրավունքների միջազգային օրվան ընդառաջ իրականացվել է ֆիլմի դիտում-քննարկում մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 12 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք, որոնք ֆիլմից հետո ակտիվ քննարկում են ծավալել թեմայի վերաբերյալ: Հանդիպման ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ համայնքի պատասխանատու Արտակ Ադամը մասնակիցներին է ներկայացրել մարդու իրավունքների ու ազատությունների էությունը, մանրամասնել է, թե ինչ իրավունքներ ունեն մարդիկ, ապա ներկայացրել, թե որն է իրավախախտումը, և որ դեպքերում կարող են սահմանափակվել մարդու իրավունքները:

«Մարդու իրավունքների կակաչ 2020» մրցանակաբաշխություն

2020թ. դեկտեմբերի 10-ին «Մարդու իրավունքների կակաչ 2020»-ը շնորհվեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին: Մարդու իրավունքների միջազգային օրը, Նիդեռլանդների կառավարության կողմից կազմակերպված առցանց արարողության ժամանակ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարար Ստեֆ Բլոկը մրցանակը հանձնեց Լ. Մարտիրոսյանին: Միևնույն ժամանակ, Երևանում Նիդեռլանդների դեսպանատունը միջոցառում էր կազմակերպել նշելու և Լիլիթին շնորհավորելու մրցանակը ստանալու կապակցությամբ, որի ընթացքում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Նիկո Սխերմերսը մրցանակը արտգործնախարարի անունից հանձնեց Լ. Մարտիրոսյանին:

Հանրային արշավներ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իր գործունեության հինգ տարիների ընթացքում բազմիցս բարձրաձայնել է սեքս աշխատող անձանց, հատկապես Տրանսգենդեր սեքս աշխատող անձանց նկատմամբ խարանի ու խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների մասին, տրամադրել է իրավաբանական աջակցություն սեքս աշխատողներին, քանի որ նրանք ենթարկվել և ենթարկվում են բռնության բոլոր ձևերի և նրանց իրավունքները խախտվում են ամեն օր: Սեքս աշխատողների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն դեկտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպել է հանրային արշավներ սեքս աշխատողների իրավունքների պաշտպանության ու նրանց մասին հասարակության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման համար՝ կոտրելու սեքս աշխատողների մասին

Անձնական պատմությունների շարք
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դեկտեմբեր ամսվա ընթացքում շարունակել է ներկայացնել Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց անձնական պատմությունների շարքը, որոնց միջոցով հավաքագրվել և արձանագրվել են Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց կյանքի տարբեր իրադարձություններ: Հարցազրույցների նպատակն է ներկայացնել վերոնշյալ խմբի ներկայացուցիչների ապրելակերպը Հայաստանի Հանրապետությունում:

Իրավաբանական խորհրդատվություն
«Իրավունքի կողմ» ՀԿ-ն իրազեկել է Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող համայնքին մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ՝ իրականացնելով 6 իրավաբանական խորհրդատվություն: Իրավական կրթությանը և խորհրդատվություններին ներգրավվել են ավելի քան 42 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք:

Կարիքների գնահատում
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց շրջանում իրականացրել է կարիքների գնահատում, որի նպատակն է եղել լուծել Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց խնդիրները՝ նրանց կարիքների բավարարման միջոցով: Կարիքների գնահատումն անցկացվել է ինչպես օնլայն համակարգի (https://docs.google.com/forms/d/e/1-FAIpQLSfvGTz8MRChdAU4-EH63ZoZH_4AhNDzm-X58Eho5WBypDd0Kw/viewform), այնպես էլ զանգերի և դեմ-առ-դեմ հանդիպումների միջոցով:

Համայնքային միջոցառում «Կանխելով արմատացած բռնությունը» թեմայի շուրջ
Դեկտեմբերի տասնհինգին կազմակերպությունն իրականացրել է «Կանխելով արմատացած բռնությունը» թեմայի շուրջ համայնքային միջոցառումը Zoom օնլայն հարթակի միջոցով, որին մասնակցել են տասնչորս Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք: Կազմակերպության համայնքի պատասխանատուն ներկայացրել է, թե ինչ է բռնությունը, բռնության տեսակները, դրսևորումները, ապա խոսել է բռնության դեպքերի կանխարգելումից և ներկայացրել այն տեղական և միջազգային կազմակերպությունները, որոնք աշխատում են այդ ուղղությամբ: Հանդիպումն անցել է ակտիվ քննարկումներով. մասնակիցներն առաջարկել են հաճախ անդրադառնալ բռնության կանխարգելման թեմային և հարակից այլ հարցերին:

Համայնքային հանդիպում «Աշխատանք և զբաղվածություն» թեմայի վերաբերյալ
Համայնքային վերջին հանդիպումն իրականացել է դեկտեմբերի 24-ին՝ «Աշխատանք և զբաղվածություն» թեմայի վերաբերյալ, որին մասնակցել են տասնհինգ Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք: Հանդիպումը վարել է «Իրավունքի կողմ» ՀԿ փաստաբան Ա. Մարգարյանը՝ հարց ու պատասխան ձևաչափով: Հանդիպման ընթացքում հնչեցվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքային պայմանագրերը, աշխատանքային պարտադիր արձակուրդը, գիշերային և արտաժամյա աշխատանքի համար հավելավճարները, գործատուի և աշխատողի պարտականություններն ու իրավունքները: Հանդիպման ավարտին Ա. Մարգարյանը պատասխանել է բոլոր մասնակիցների հարցերին՝ նրանց լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելով:

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

«Մարդու իրավունքների կակաչ 2020» մրցանակաբաշխություն 2020թ. դեկտեմբերի 10-ին «Մարդու իրավունքների կակաչ 2020»-ը շնորհվեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին:

Մարդու իրավունքների միջազգային օրը, Նիդեռլանդների կառավարության կողմից կազմակերպված առցանց արարողությանժամանակ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարար Ստեֆ Բլոկը մրցանակը հանձնեց Լ. Մարտիրոսյանին:

Միևնույն ժամանակ, Երևանում Նիդեռլանդների դեսպանատունը միջոցառում էր կազմակերպել նշելու և Լիլիթին շնորհավորելու մրցանակը ստանալու կապակցությամբ, որի ընթացքում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Նիկո Սիսերմերսը մրցանակը արտգործնախարարի անունից հանձնեց Լ. Մարտիրոսյանին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամեն տարի դեկտեմբերի 17-ը նշվում է որպես սեքս աշխատողների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օր: Այս օրվա նպատակն է ողջ աշխարհում բարձրաձայնել սեքս աշխատող անձանց նկատմամբ ատելության կոչերի, ատելության հիմքով հանցագործությունների մասին, հասարակական խարանի ու խտրականության մասին, կանխել դրանք և նպաստել սեքս աշխատանքի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իր գործունեության հինգ տարիների ընթացքում բազմիցս բարձրաձայնել է սեքս աշխատող անձանց, հատկապես Տրանսգենդեր սեքս աշխատող անձանց նկատմամբ խարանի ու խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների մասին, տրամադրել է իրավաբանական աջակցություն սեքս աշխատողներին, քանի որ նրանք ենթարկվել և ենթարկվում են բռնության բոլոր ձևերի և նրանց իրավունքները խախտվում են ամեն օր:

Սեքս աշխատողների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն յուրաքանչյուր տարի կազմակերպում է հանրային արշավներ սեքս աշխատողների իրավունքների պաշտպանության ու նրանց մասին հասարակության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման համար՝ կոտրելու սեքս աշխատողների մասին արմատացած կարծրատիպերն ու վերացնելու նրանց նկատմամբ ձևավորված բացասական կարծիքը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում սեքս աշխատողների նկատմամաբ բռնությունները և տիրող իրավիճակը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կոչ է անում.

Քաղաքացիական հասարակությանը ընդգրկել սեքս աշխատողների խնդիրներն իրենց օրակարգում և շարունակել իրականացնել ջատագովություն՝ խտրականության ու խարանի վերացման համար:

ԶԼՄ-ներին օգտագործել «սեքս աշխատող» և «սեքս աշխատանք» եզրույթները և զերծ մնալ ատելության ու խտրականության քարոզից սեքս աշխատողների նկատմամբ, լինել անաչառ և անկողմնակալ, պահպանել լրագրողական էթիկան և մատուցել լուրերն առանց խեղաթյուրելու և աղավաղելու:

Պետական մարմիններին իրականացնել համապատասխան իրավական քայլեր՝ ապահովելու սեքս աշխատողների նկատմամբ խտրականության, վարչական տուգանքների բացառումը, օրենքով ապահովել սեքս աշխատողների պաշտպանվածությունը և անվտանգությունը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հիշեցնում է, որ բոլորը իրավահավասար են և իրավունք ունեն ապրելու առանց բռնությունների, խարանի ու խտրականության:
Կազմակերպությունը վերահաստատում է հանուն հավասարության իր որդեգրած արժեքներն ու ռազմավարությունը և շարունակելու է ջանքեր չխնայել Հայաստանի Հանրապետությունում սեքս աշխատող անձանց իրավունքների լիարժեք կիրարկման համար

ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ
ՆԿԱՏՄԱՄԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ
ՍԻՋԱԶԳԱՑԻՆ
ՕՐ

ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

Մեր զրուցակիցն է Տրանսգենդեր կին Վ.Կ.-ն, որը նոր է ընդունվել համալսարան: Վ.Կ.-ն չցանկացավ նշել իր անունը, համալսարանը և մասնագիտությունը, որպեսզի չենթարկվի խտրականության:

Վ.Կ.-ն պատմում է, որ ընդունելության քննություններից հետո, երբ արդեն պարզ էր, թե ովքեր են իր համակուրսեցիները, համալսարանում հանդիպում են կազամկերպում՝ ծանոթանալու միմյանց և դասախոսների հետ: Սակայն այդ հանդիպմանը մեր զրուցակիցը չի կարողանում մասնակցել, նրան միայն սեպտեմբեր ամսվա սկզբին է հաջողվում ծանոթանալ համկուրսեցիների հետ:

«Առաջին այցիս ժամանակ, հիշում եմ, որ պատահականորեն մոտեցա որևէ աշխատակցի, խնդրեցի, որ ինձ ուղեկցի իմ լսարան, որովհետև արդեն իսկ ուղարկված էր դասացուցակը, ու ես կարող էի ասել՝ ինձ այսինչ լսարանն է անհրաժեշտ: Աշխատակիցն ինձ ուղեկցեց: Առաջին ժամը անգլերենի դասն էր: Մտա ներս, ողջունեցի բոլորին, քայլեցի դեպի պատահական ազատ նստարանն ու նստեցի մի աղջկա կողքին, որը սիրով ծանոթացավ ինձ հետ: Այդ պահին մտածում էի, որ նման բան գրեթե անհնար է, երբ առանց կարծրատիպային վերաբերմունքի ինչ-որ մեկը կարող է շփվել ինձ հետ: Բնականաբար, անհանգստություն ունեի, որ հենց առաջին օրը կարող եմ ենթարկվել խտրականության, իսկ ինչն ավելի վատ է՝ բռնության», – պատմում է մեր զրուցակիցը:

Հետո շարունակում է նշել, որ երկուսով սկսեցին հաճախ անգլերեն խոսել, որովհետև, ինչպես ներկայացավ այդ աղջիկը, նա երկսեռական սեռական կողմնորոշվածություն ունի, իսկ հայերենով խոսելը կարող էր առավել տեսանելի դարձնել նրանց, հետևաբար նրանց նկատմամբ խտրականությունն անխուսափելի կարող էր լինել: Այդ օրվանից ի վեր նրանք դառնում են համալսարանական լավագույն ընկերներ:

Իր կյանքի պատմությունն ամփոփելով՝ Վ. Կ.-ն ասում է «մեր օրը սկսվում է դասերով, դասամիջոցները միասին ենք անցկացնում և դասերից հետո հաճախ քայլում ենք որևէ զբոսայգում: Քննարկում ենք դասերը, մեր կյանքի լավագույն պահերը, հիշողությունները, տարբեր թեմաներ, որոնք կարող են մեզ դարձնել առավել երջանիկ ու մտերիմ: Մենք իրար շատ լավ ենք հասկանում, որի լավագույն օրինակն այն է, որ մենք հաճախ ենք կանգնում այն անձանց կողքին, որոնք համալսարանում որևէ կերպ ենթարկվում են խտրականության, բուլինգի կամ բռնության: Ավելին, մենք հասցրել ենք մի շարք զրույցներ ունենալ դասախոսներից մի քանիսի հետ և իրազեկել նրանց Տրանս սեքս աշխատող անձանց կյանքի, սեռականության և հարակից այլ հարցերի վերաբերյալ, որոնք կարող են ինչ-որ կերպ նպաստել հասարակական մենթալիտետի փոփոխությանը և հանրության շրջանում Տրանս անձնաց մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը»:

ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շարունակում է ներկայացնել Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց պատմությունների շարքը, որոնց միջոցով հավաքագրվում և արձանագրվում են Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց կյանքի տարբեր իրադարձություններ: Հարցազրույցների նպատակն է ներկայացնել վերոնշյալ խմբի ներկայացուցիչների ապրելակերպը Հայաստանի Հանրապետությունում:

Սույն պատմությունը ինքնաբացահայտման մասին է: Մեր զրուցակիցն է նույնասեռական, ազենդեր Ա.Բ.-ն: Ա. Բ.-ի համար չափազանց կարևոր է եղել ընտանեկան համերաշխությունը, և արել է ամեն ինչ, որ իր ինքնության մասին իմանալու դեպքում կոնֆլիկտներ չառաջանան:

-Իմ շրջապատում շատերը գիտեն իմ սեռական կողմնորոշվածության մասին: Նկատի ունեմ թե՛ ընտանիքս, թե՛ բարեկամներս ու հարազատներս, թե՛ ընկերներս ու ծանոթներս, ինչպես նաև իմ համազյուղացիները (ապրում եմ Երևանին մոտ գյուղերից մեկում): Ու բոլորը մինչև հիմա իմ շրջապատում են: Ինչու եմ կարևորում նշել սա, որովհետև բոլորը ադեկվատ են վերաբերվում ինձ ու ամեն ինչ նորմալ է իմ ու նշված մարդկանց հարաբերություններում: Դե արդեն իսկ պարզ է, որ ես հանրային կերպով ինքնաբացահայտվել եմ: Բայց կան մի քանիսը, որոնք ինձ համար չափազանց կարևոր են: Շատերը գիտեն, որ ես եղել եմ Շուռնուխում, որտեղ խառնամբոխը հարձակվեց մեզ վրա ու բռնություններ սկսեց կիրառել մեր նկատմամբ: Երբ վերջապես տուն էի հասել շուռնուխյան դեպքերից հետո, ընտանիքիս համար արդեն ամեն ինչ պարզ էր: Պառկած էի, մաման մոտեցավ ու ասաց. «Լավ, ես քեզ կփորձեմ ժամանակ տալ»: Այդ օրերին ես այնքան ծանր հոգեբանական վիճակում էի, որ նույնիսկ չկարողացա աշխատանքս շարունակել անգամ ԼԳԲՏ+ անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունում: Սակայն, մայրիկիս կողմից արված այդ հայտարարությունն ինձ խոցեց հեգեպես, քանի որ ես էլ գիտակցեցի, որ մայրս ամեն ինչ հասկանում է ու գիտի իմ ինքնության մասին: Երբ մայրս դրսում նստած էր, ես մոտեցա նրան ու կողքը նստելով ասացի, որ նույնասեռական եմ: Մայրս գրկեց ինձ, ասաց, որ արդեն ամեն ինչ հասկացել էր, բայց դա չի խանգարում իրեն հպարտանալ ինձնով: Ավելին, մի քանի խորհուրդներ տվեց ինձ, որ ես պետք է հպարտ լինեմ, թե ով եմ ես, որքան ձեռքբերումներ ունեմ և այլն, – ներկայացնում է մեր զրուցակիցը ու շարունակում, որ այդ օրվանից հետո իր ու մայրիկի միջև կատարյալ ընկերություն ու ավելի ջերմ հարաբերություններ ձևավորվեցին: -Այդ պահից ես հասկացա, որ ունեմ աշխարհում լավագույն մայրիկը, որն ինձ համար կատարյալն է:

Ա. Բ.-ն շարունակում է ներկայացնել մայրիկի հետ ունեցած հարաբերություններն ու կարևորում, որ ամեն ինչ չէր կարող այդքան լավ ավարտ ունենալ, եթե ինքը տարիներ շարունակ չաշխատեր ծնողների հետ: Ասում է, որ բազմիցս ֆիլմեր են դիտել միասին, որոնք պատմում են ԼԳԲՏ+ անձանց մասին, քննարկումներ ունեցել, լսել միմյանց, ազատորեն արտահայտել իրենց կարծիքը և այլն: Շարունակում է խոսել իր մայրիկի այն ապրումների մասին, երբ թվում էր, թե միակ մայրն է աշխարհում, որն ունի նույնասեռական որդի: Սակայն այդ հարցն էլ իր հանգուցալուծումը գտավ, երբ ծանոթացավ ԼԳԲՏ+ անձանց ծնողների հետ:

ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ և ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն այս ամիս թվով երրորդ հարցազրույցն է ներկայացնում. մեր զրուցակիցն է Լ. Ա.-ն, որը պատմում է իր ինքնաբացահայտման պատմությունը՝ որպես նույնասեռական անձ:

-Ընկերուհուս հետ բավականին մոտ եմ: Մանկությանս ընկերուհին է, փոքր տարիքից շատ ենք խաղացել իրար հետ: Հիմա, քանի որ համալսարանում նույն խմբում ենք սովորում, միասին պարբերաբար դասապատրաստումներ ենք իրականացնում: Մի օր այգում նստած զրուցում էինք դասախոսների մասին: Հետո ասացի, որ շատ կարևոր բան ունեմ նրան պատմելու: Համաձայնության եկանք գնալ որևէ հանգիստ տեղ, որովհետև այն, ինչ պետք է ասեմ, պահանջում է ապահով վայր:

Լ.-ն շարունակում է պատմել, թե հետո ինչպես են գնացել ԼԳԲՏ համայնքահեն կազմակերպություններից մեկը, որտեղ էլ պետք է զրուցեին:

-Ես մտածված առաջարկեցի ընկերուհուս գնալ գրասենյակ, որտեղ համայնքային կենտրոն կա ու կարող ենք հանգիստ զրուցել: Բայց ամենակարևորն այն է, որ ուզում էի հասկանալ, թե ինչպես կարձագանքի ընկերուհիս, երբ մտնի գրասենյակ ու տեսնի ԼԳԲՏ+ անձանց դրոշը: Բարեբախտաբար արձագանքը բավականին դրական էր: Ես կանգնեցի դրոշի մոտ ու ասացի, որ նույնասեռական եմ: Ընկերուհիս առանց որևէ արձագանքի նայեց ինձ վրա ու ասաց, որ ոչ մի խնդիր չի տեսնում: Ես լիովին այլ արձագանք էի ակնկալում, գոնե զարմանք կամ ծիծաղ, բայց ամեն ինչ ավելի լավ ստացվեց, քան ես կարող էի պատկերացնել: Հետո մենք թեյեցինք, որի ժամանակ ընկերուհիս ասաց, որ վաղուց ենթադրում էր, որ ես նույնասեռական եմ, սակայն հարցուփորձ չէր անում, որովհետև դա իմ անձնական կյանքն է:

Լ.-ն նշում է, որ ընկերուհու մոտ ինքնաբացահայտվելուց հետո նրանց հարաբերություններն ավելի ամրապնդվեցին: Ըստ մեր զրուցակցի՝ ինքնաբացահայտումը կարծես մի մեթոդ էր, որի միջոցով նրանք կարող էին ավելի մտերմանալ, առավել հաճախ հանդիպել, միասին զբոսնել, աջակցել միմյանց և այլոց:
Լ.-ն պատմությունն ավարտում է՝ կարոտելով այն օրերը, երբ միասին խենթ քայլերի էին գնում և նշելով, որ ազնվությունը միշտ օգնում է հասնել խաղաղության:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, կարևորելով Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց շրջանում կրթության և իրազեկվածության մակարդակի բարձրացումը առողջության, սեռավարակների և մարդու իրավունքների վերաբերյալ, սույն թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է թվով 6 մեկօրյա դասընթաց սեքս աշխատող անձանց իրավունքների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ: Դասընթացները վարում էին կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը և կազմակերպության փաստաբան Արթուր Մարգարյանը:

Լ. Մարտիրոսյանը սեպտեմբերի 9-ին և հոկտեմբերի 17-ին իրականացված «ՄԻԱՎ/ՁԻԱՀ և Գլոբալ ֆոնդ» թեմայի վերաբերյալ դասընթացների ընթացքում մասնակիցներին մանրամասնորեն ներկայացրեց, թե ինչ են ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը, ինչպես է պետք իրականացնել հետազոտություններ ՄԻԱՎ կարգավիճակի մասին իրազեկվելու և այն կանխարգելելու համար: Դասընթացների ընթացքում Լ. Մարտիրոսյանն անդրադարձավ ՄԻԱՎ վարակակիր սեքս աշխատող անձանց նկատմամբ խարանի ու խտրականության դրսևորումներին, հորդորեց զերծ մնալ խտրական վերաբերմունքից սեքս աշխատող և ՄԻԱՎ վարակակիր անձանց նկատմամբ և իրազեկ լինելով պայքարել սեքս աշխատողների նկատմամբ խարանին: Դասընթացների ընթացքում Լիլիթ Մարտիրոսյանը խոսեց նաև Գլոբալ ֆոնդի գործունեությունից, ներկայացրեց ֆոնդի աջակցությամբ իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի մասին:

Դասընթացներին մասնակցեցին Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք, որոնք իրենց հարցերն ուղղեցին կազմակերպության նախագահ Լ. Մարտիրոսյանին: Մասնակիցների բոլոր հարցերը ստացան համապարփակ պատասխաններ, իսկ դասընթացներն անցան ինֆորմատիվ և բովանդակային քննարկումներով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տրանսգենդեր և սեքս աշխատող անձանց համար սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընացքում իրականացրել է թվով 4 դասընթաց՝ «Սեքս աշխատող անձանց իրավունքները», «Սեքս աշխատողների իրավունքների խախտման դեպքերը», «Սեքս աշխատող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները» և «Առողջության իրավունքը» թեմաներով: Դասընթացները վարեց կազմակերպության փաստաբան Արթուր Մարգարյանը, որը բոլոր դասընթացների ընթացքում հանգամանալից ներկայացրեց մարդու իրավունքները, իրավունքների խախտման դեպքերը, դրանց պաշտպանությունը, սեքս աշխատողների իրավունքների պաշտպանության օրինական բացերը և այլն: Փաստաբանը, խոսելով սեքս աշխատող անձանց իրավունքների խախտումների մասին, ներկայացրեց, թե ինչ դեպքեր են տեղի ունեցել մինչ այս, որոնք փաստագրվել են «Իրավունքի կողմ» ՀԿ-ի կողմից, և թե ինչ իրավաբանական ծառայություններ է մատուցում կազմակերպությունը: Անդրադառնալով առողջության իրավունքին՝ դասընթացավարը ներկայացրեց բժշկական հաստատություններում Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց նկատմամբ բռնության, խտրականության, խարանի, բուլինգի դրևորումները, ներկայացրեց առողջության իրավունքի ապահովման մի քանի մեխանիզմներ և այլն:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դասընթացների իրականացման ընթացքում ներգրավեց ավելի քան 60 Տրանս ԼԳԲԻՔ+ սեքս աշխատող անձանց, որոնք իրենց ակտիվ մասնակցությունն ու ներդրումն ունեցան դասընթացների արդյունավետ իրականացման գործում:

Կազմակերպությունը շարունակում է ծավալել կրթական և տեղեկատվական գործունեություն, որոնց միջոցով բարձրացվում է Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրազեկվածության մակարդակը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, մարդու իրավունքների և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

ԻԿՀԿ-ն անցնող տարվա ընթացքում կարողացել է ներգրավել հարյուրավոր Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց, որոնք օգտվել են կազմակերպության կողմից տրամադրվող կրթական, տեղեկատվական, իրավաբանական և սոցիալական ծառայություններից, քանի որ կազմակերպության համար կարևոր է Տրանսգենդեր անձանց կրթությունը, բարօրությունը և բարեկեցությունը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ



«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացրել է միջոցառումների շարք, որոնք տեղի են ունեցել կազմակերպության Տրանս ԼԳԲԻՔ+ ապահով տարածքում: Միջոցառումներն իրականացվել են Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց կրթական և իրազեկվածության մակարդակի բարձրացման, ինչպես նաև բարեկեցության և բարօրության, ներհամայնքային հարաբերությունների խթանման ու բարելավման համար:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպությունն իրականացրել է կարիքների գնահատում, որը շարունակական բնույթ է կրում նաև այս ամիս: Կարիքների գնահատման նպատակն է բարելավել կազմակերպության աշխատանքները՝ դրանք դարձնելով առավել նպատակային՝ արդյունավետ քայլեր ձեռնարկելով համայքի կարիքների բավարարման և նրանց կրթական մակարդակի զարգացման համար: Դեկտեմբերի չորսին կազմակերպությունն իրականացրել է ֆոկուս խմբային հանդիպում կարիքների գնահատման համար, որին մասնակցել են ութ Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք: Հանդիպումը տևել է մեկ ժամ, որի ընթացքում մասնակիցները ներկայացրել են իրենց կարծիքները, կարիքներն ու խնդիրները:

Այնուհետև, դեկտեմբերի ութին՝ Մարդու իրավունքների միջազգային օրվան ընդառաջ իրականացվել է ֆիլմի դիտում-քննարկում մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 12 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք, որոնք ֆիլմից հետո ակտիվ քննարկում են ծավալել թեմայի վերաբերյալ: Հանդիպման ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ համայնքի պատասխանատու Արտակ Ադամը մասնակիցներին է ներկայացրել մարդու իրավունքների ու ազատությունների էությունը, մանրամասնել է, թե ինչ իրավունքներ ունեն մարդիկ, ապա ներկայացրել, թե որն է իրավախախտումը, և որ դեպքերում կարող են սահմանափակվել մարդու իրավունքները:

Դեկտեմբերի տասնհինգին կազմակերպությունն իրականացրել է «Կանխելով արմատացած բռնությունը» թեմայի շուրջ համայնքային միջոցառումը Zoom օնլայն հարթակի միջոցով, որին մասնակցել են տասնչորս Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք: Կազմակերպության համայնքի պատասխանատուն ներկայացրել է, թե ինչ է բռնությունը, բռնության տեսակները, դրսևորումները, ապա խոսել է բռնության դեպքերի կանխարգելումից և ներկայացրել այն տեղական և միջազգային կազմակերպությունները, որոնք աշխատում են այդ ուղղությամբ: Հանդիպումն անցել է ակտիվ քննարկումներով. մասնակիցներն առաջարկել են հաճախ անդրադառնալ բռնության կանխարգելման թեմային և հարակից այլ հարցերին:

Համայնքային վերջին հանդիպումն իրականացել է դեկտեմբերի 24-ին՝ «Աշխատանք և զբաղվածություն» թեմայի վերաբերյալ, որին մասնակցել են տասնհինգ Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձինք: Հանդիպումը վարել է «Իրավունքի կողմ» ՀԿ փաստաբան Ա. Մարգարյանը՝ հարց ու պատասխան ձևաչափով: Հանդիպման ընթացքում հնչեցվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքային պայմանագրերը, աշխատանքային պարտադիր արձակուրդը, գիշերային և արտաժամյա աշխատանքի համար հավելավճարները, գործատուի և աշխատողի պարտականություններն ու իրավունքները: Հանդիպման ավարտին Ա. Մարգարյանը պատասխանել է բոլոր մասնակիցների հարցերին՝ նրանց լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն 2020 թ.-ի ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքում խթանել է Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացումը մարդու իրավունքների պաշտպանության, համայնքային առողջության և ապահովության և տրանս ակտիվիզմի վերաբերյալ, նպաստել նրանց բարօրությանը՝ տրամադրելով իրավաբանական, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն և մարդասիրական աջակցություն:

Հիշեցնենք, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության տրանս ապահով տարածքը բաց է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 14:00-ից մինչև 17:00-ն:









RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO/

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO/

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.